ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19

ք. Երևան «15» «ապրիլ» 2022թ.

Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Է. Սեհինյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայանտառ» ՊՈԱԿ-ն, ի դեմս Ընկերության տնօրենի պաշտոնակատար Պ. Ցուգունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ»** աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված Աշխատանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3): Վերջին եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնել մինչև 2022 թվականի դեկտեմբերի 5-ը:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված Աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 413 011 700 (չորս հարյուր տասներեք միլիոն տասնմեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 8 260 200 (ութ միլիոն երկու հարյուր վաթսուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

Պատվիրատուն փոխանցում է Կատարողի հաշվին, որպես կանխավճար՝ պայմանագրի կնքումից հետո 10 օրյա ժամկետում:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[19.1]:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված

---

[18] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքի կատարման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1,N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե	«Հայանտառ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ա. Արմենակյան 129	ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հշ 900011023265	հշ 900018002270
ՀՎՀՀ 00476409	ՀՎՀՀ 02512343
Անտառային կոմիտեի	«Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի
գլխավոր բերդապետի պաշտոնակատար	պաշտոնակատար
Լ. Սեհնյան	**Պ. Ցուգունյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«15» «մարտի» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի								
հերթերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավորի գինը	ընդհանուր գինը /՝՝ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	772331200 «անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ»	• Անտառմշակույթների հիմնադրում աշնանը տնկման միջոցով – 130.0 հա • Նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների միանվագ ագրոտեխնիկական խնամք -839 հա • Անտառմշակույթների խնամք խոտհունձի միջոցով – 392.2 հա • Նախորդ տարիներին հիմնված տնկարանի խնամք – 13.974 հա • Կոճղաշիվային վերաճի օժանդակում – 77.0 հա • Նախորդ տարիներին հիմնադրված անտառի միանվագ խնամք /ոռոգումով/ - 500.0 հա • Ժամանակավոր առուների վերանորոգում – 40 հա • Նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում – 194.0 հա • ոռոգման ջրի ծախս • Գարնանը տնկարանի ցանք և խնամք – 2.2 հա • Տնկարանի ցանք աշնանը – 2.8 հա • Փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցում – 250.0 հազ. հատ • Տնկանյութի հանում – 601.46 հազ. հատ • Ցանկապատի կառուցում – 26.4 կմ • Սերմերի մթերում և որակավորում – 6086.4 կգ *Աշխատանքները պետք է կատարվեն հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 27-ի «Պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման առանձին աշխատանքների կատարման ծախսերի նորմատիվները հաստատելու մասին» № 684-Ն որոշման պահանջները:*	դրամ	413011700	413011700	1	«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառոտնտեսություն» մասնաճյուղերում	Պրոմանագրի կնքման օրվանից 25.11.22թ

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
՝՝ 900011023265
ՀՎՀՀ 00476409
Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտեի
գլխավոր ֆինանսական տնօրեն
Է. Սեդրակյան
(ստորագրություն)Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայանտառ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
՝՝ 900018002270
ՀՎՀՀ 02512343
«Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի
պաշտոնակատար
Պ. Ցուգունյան
(ստորագրություն)Կ.Տ.

Հավելված №2
«15» «մարտի» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**անվանումը**	**դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	772331200	«անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ»	-	-	-	8260200	90862574	90862574	165204680	165204680	165204680	330409360	371710530	413011700	**413011700**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409
Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտեի
գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Է. Սեհնյան
(ստորագրություն)Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Հայանտառ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900018002270
ՀՎՀՀ 02512343
«Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի
պաշտոնակատար
Պ. Ցուգունյան
(ստորագրություն)Կ.Տ.

Հավելված №3
«15» «ապրիլ» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

«Հայանտառ» ՊՈԱԿ
ք.Երևան, Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900018002270
ՀՎՀՀ 02512343

Պատվիրատու

Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №_____
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2022թ

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

Պայմանագրի համարը՝ № ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19

Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « »2022 թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1								

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված №3.1
«25» «մարտի» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №_____

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Անտառային կոմիտե» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) և ---------- (այսուհետ՝ Կատարող) միջև « » « » 2022 թ -ին կնքված № ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 2022 թ -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված №1.1
«_____» «_____» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով պայմանագրի

ՄԻԱՎՈՐԻ ՀԱՇՎԱՐԿ*

N	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	ծավալը	Միավորի արժեքը	գումարը, հազ. դրամ	Աշխատանքի կատարման ժամկետները	
						Սկիզբը	Ավարտը
1	Անտառմշակույթների տնկում աշնանը	հա	130.0	471.59	61,306.7	01.10.22	25.11.22
2	Նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների միանվագ ագրոտեխնիկական խնամք	հա	839.0	58.0	48,662.0	պայմ. կնք. օրվանից	01.10.22
3	Անտառմշակույթների խնամք խոտհունձի միջոցով	հա	392.2	108.75	42,651.8	01.07.22	01.10.22
4	Նախորդ տարիներին հիմնված տնկարանի խնամք	հա	13.974	1879.43	26,263.2	պայմ. կնք. օրվանից	01.10.22
5	Կոճղաշիվային վերաճի օժանդակում	հա	77.0	98.4	7,576.8	01.10.22	25.11.22
6	Նախորդ տարիներին հիմնադրված անտառի միանվագ խնամք /ոռոգումով/	հա	500.0	12.89	6,445.0	պայմ. կնք. օրվանից	01.10.22
7	Ժամանակավոր առուների վերանորոգում, հա	հա	40.0	6.96	278.4	պայմ. կնք. օրվանից	01.10.22
8	Նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում	հա	194.0	76.44	14,829.4	պայմ. կնք. օրվանից	25.11.22
9	ոռոգման ջրի ծախսը*	հազ.խմ	500.0		6,176.5	պայմ. կնք. օրվանից	01.10.22
10	Գարնանը տնկարանի ցանքս և խնամք	հա	2.2	2857.66	6,286.9	պայմ. կնք. օրվանից	01.10.22
11	Տնկարանի հիմնում աշնանը	հա	2.8	978.24	2,739.1	01.10.22	25.11.22
12	Փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցում	հազ. հատ	250.0	55.64	13,910.0	պայմ. կնք. օրվանից	25.11.22
13	Տնկանյութի հանում (սերմնաբուսակ)	հազ. հատ	601.460	5.8	3,488.5	պայմ. կնք. օրվանից	25.11.22
14	Ցանկապատի կառուցում	կմ	26.4	1069.72	28,240.6	պայմ. կնք. օրվանից	25.11.22
15	Սերմերի մթերում և որակավորում	կգ	6086.4		2,760.0	01.05.22	25.11.22
16	Տրանսպորտային ծախսեր				25,524.6		
ԸՆԴԱՄԵՆԸ					**297,139.3**		
Վերադիր ծախսեր 5.3%					15,748.4		

Ընդամենը				**312,887.7**		
Շահույթ 10%				31,288.7		
Ընդամենը				**344,176.4**		
ԱԱՀ 20%				68,835.3		
ԸՆԴԱՄԵՆԸ				**413,011.7**		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409
Անտառային կոմիտեի
գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
Է. Մեհրաբյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Հայանտառ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900018002270
ՀՎՀՀ 02512343
«Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի
պաշտոնակատար
Պ. Ցուգունյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

15.04.2022 թ. կնքած N ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան 23 դեկտեմբերի 2022 թ.

Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Լ. Ալեքսանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հայանտառ» ՊՈԱԿ-ն, ի դեմս Ընկերության տնօրենի պաշտոնակատար Ս. Մարկոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից,, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ հոդվածով և 56-րդ կետով և հիմք ընդունելով 2022 թվականի ապրիլի 15-ին կնքած N ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով «ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՆՏԱՌԱՊԱՏՄԱՆ» աշխատանքների գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ կետը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին

1.1 Հաստատել համաձայնագրի հավելված NN 1,2 և հավելված N1.1-ը

1.2 Ուժը կորցրած ճանաչել Պայմանագրի հավելված 1, 2 և հավելված N1.1-ը

Այլ պայմաններ

1.3 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև կնքած N ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

1,4Սույն համաձայնագրում կողմերի համար չնշված՝ պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

1.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտե	«Հայանտառ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ա. Արմենակյան 129	ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265	ՀՀ 900018002270
ՀՎՀՀ 00476409	ՀՎՀՀ 02512343
Անտառային կոմիտեի գլխավոր քարտուղար	«Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար
Լ. Ալեքսանյան	**Ս. Մարկոսյան**
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«_____» «_____» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի								
հերթական նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավորի գինը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	772331200 «անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներ»	• Անտառմշակույթների հիմնադրում աշնանը տնկման միջոցով – 130.0 հա • Նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների միանվագ ագրոտեխնիկական խնամք -662.691 հա • Անտառմշակույթների խնամք խոտհունձի միջոցով – 337.4 հա • Նախորդ տարիներին հիմնված տնկարանի խնամք – 13.974 հա • Կոճղաշիվային վերաճի օժանդակում – 77.0 հա • Նախորդ տարիներին հիմնադրված անտառի միանվագ խնամք /ոռոգումով/ - 405.4 հա • Ժամանակավոր առուների վերանորոգում – 40 հա • Նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում – 194.0 հա • ոռոգման ջրի ծախս -404.2 հա • Գարնանը տնկարանի ցանք և խնամք – 1.94 հա • Տնկարանի ցանք աշնանը – 3.06 հա • Փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցում – 250.0 հազ. հատ • Տնկանյութի հանում – 601.46 հազ. հատ • Ցանկապատի կառուցում – 26.4 կմ • Սերմերի մթերում և որակավորում – 6086.4 կգ *Աշխատանքները պետք է կատարվեն հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 27-ի «Պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման առանձին աշխատանքների կատարման ծախսերի նորմատիվները հաստատելու մասին» № 684-Ն որոշման պահանջները:*	դրամ	387174800	387174800	1	«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում	Պայմանագրի կնքման օրվանից 25.11.22թ

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Ա. Արմենական 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409
Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտեի
գլխավոր քարտուղար
Լ.Ալեքսանյան
(ստորագրություն)Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Հայանտառ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ա. Արմենական 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900018002270
ՀՎՀՀ 02512343
«Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի
պաշտոնակատար
Ս. Մարկոսյան
(ստորագրություն)Կ.Տ.

Հավելված №2
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 2022թ. մայիսի «___» ___ թվականի
№ ՇՄՀԱՀ-ԳՄՇՁԲ-22/19 ցանցային համակարգերի
ձեռքբերման գնանշում հայտի

ՀԱՅՏՆԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՅԱՆ*

Կիրառվող արժույթ՝ դրամ

Չափաբաժնի համարը	Ապրանքի անվանումը, ըստ միջազգային դասակարգչի (ՀՊԴ) կոդի	Ապրանքի մատակարարման ենթակա ընդհանուր ծավալը (քանակը)												Ընդամենը	Ապրանքի գինը՝ դրամով	Ապրանքի մատակարարման հասցեն	Ապրանքի մատակարարման ժամկետը
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր				
1	772331200 «Վերձիզոտոռոլշ ոզոյտոռհոռաստոռտ ե ոզոյդեզոռհոռվերձիստոռ»	387174800	387174800	330409360	165204680	165204680	165204680	165204680	90862574	90862574	8260200	-	-	387174800	Ընդամենը	Ընտրության վերջնական հանձնաժողով	Ամբողջ ցանցային համակարգերի ներմուծում՝ գործարկում՝ իսկզիման

Սիսիան

*Հեղինակը պատասխանատու է գնանշման եղ բոլոր տեղեկությունների ճշգրտության համար:

Հավելված №1.1
«_____» «_____» 2022թ. կնքված
№ ՇՄՆԱԿ-ՄԱԱՇՁԲ-22/19 ծածկագրով պայմանագրի

ՄԻԱՎՈՐԻ ՀԱՇՎԱՐԿ*

N	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	ծավալը	Միավորի արժեքը	գումարը, հազ. դրամ	Աշխատանքի կատարման ժամկետները	
						Սկիզբը	Ավարտը
1	Անտառմշակույթների տնկում աշնանը	հա	**130**	**471,59**	**61306,7**	01.10.22	25.11.22
2	Նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների միանվագ ագրոտեխնիկական խնամք	հա	**662,691**	**58,0**	**38436,1**	պայմ. կնք. օրվանից	01.10.22
3	Անտառմշակույթների խնամք խոտհունձի միջոցով	հա	**337,4**	**108,75**	**36692,3**	01.07.22	01.10.22
4	Նախորդ տարիներին հիմնված տնկարանի խնամք	հա	**13,974**	**1879,43**	**26263,2**	պայմ. կնք. օրվանից	01.10.22
5	Կոճղաշիվային վերաճի օժանդակում	հա	**77**	**98,4**	**7576,8**	01.10.22	25.11.22
6	Նախորդ տարիներին հիմնադրված անտառի միանվագ խնամք /ոռոգումով/	հա	**405,4**	**12,89**	**5225,6**	պայմ. կնք. օրվանից	01.10.22
7	Ժամանակավոր առուների վերանորոգում, հա	հա	**40**	**6,96**	**278,4**	պայմ. կնք. օրվանից	01.10.22
8	Նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացում	հա	**194**	**76,44**	**14829,4**	պայմ. կնք. օրվանից	25.11.22
9	ոռոգման ջրի ծախսը*	հազ.խմ	**404,2**	**12**	**4993,1**	պայմ. կնք. օրվանից	01.10.22
10	Գարնանը տնկարանի ցանքս և խնամք	հա	**1.94**	**2857,66**	**5543.9**	պայմ. կնք. օրվանից	01.10.22
11	Տնկարանի հիմնում աշնանը	հա	**3.06**	**978,24**	**2993.4**	01.10.22	25.11.22
12	Փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցում	հազ. հատ	**250**	**55,64**	**13910,0**	պայմ. կնք. օրվանից	25.11.22

13	Տնկանյութի հանում (սերմնաբուսակ)	հազ. հատ	**601,460**	**5,8**	**3488,5**	պայմ. կնք. օրվանից	25.11.22
14	Ցանկապատի կառուցում	կմ	**26,4**	**1069,72**	**28240,6**	պայմ. կնք. օրվանից	25.11.22
15	Սերմերի մթերում և որակավորում	կգ	**6086,4**	**0,45**	**2760,0**	01.05.22	25.11.22
16	Տրանսպորտային ծախսեր				**26013.3**		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը					**278551,0**		
Վերադիր ծախսեր 5.3%					**14763,2**		
Ընդամենը					**293314,2**		
Շահույթ 10%					**29331,4**		
Ընդամենը					**322645,6**		
ԱԱՀ 20%					**64529,2**		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը					**387174,8**		

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

Շրջակա միջավայրի նախարարության
Անտառային կոմիտե
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409
Անտառային կոմիտեի
գլխավոր քարտուղար
Լ. Ալեքսանյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Հայանտառ» ՊՈԱԿ
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900018002270
ՀՎՀՀ 02512343
«Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի
պաշտոնակատար
Ս. Մարկոսյան

(ստորագրություն)
Կ.Տ.